

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Michael E. STONE. Concordance and Texts of the Armenian Version of IV Ezra. Oriental Notes and Studies No. 11. Computer Program for Concordance prepared by Zion Busharia. Jerusalem, 1971.

Միֆայել ՄՔՈՆ. Գ եզրի հայերեն բարգմանութեան բնագրեր եւ համաբարբառ, Ժէ էջ ներածութիւն եւ 340 էջ: Բնագրեր՝ էջ 2—83. Համարաբառ՝ 87—340: Երուսաղէմ, 1971. Երուսաղէմի Երբայական Համալսարանի Արեւելագիտութեան բաժնի Հրատարակութիւն:

Եզրի կամ Եզրասի Չորրորդ գիրքը կամ Յայտնութիւնը Աստուածաշնչի անկանոն գրքերից է: Իր այս աշխատութեան Հրատարակութիւնից առաջ լոյս ընծայած յօդուածներում, Մ. Սթոնը ցոյց է տուել անկանոն գրքերի Հին Հայերէն թարգմանութեան նշանակութիւնը հենց այդ գրքերի, ինչպէս նաեւ Աստուածաշնչի, հետևաբար եբրայական Հին գրականութեան ուսումնասիրութեան համար: Պարականոն գրքերի կարեւորութիւնը ցարզ անտեսուած է եղել, և զբանջ ուսումնասիրութեան ուղղութեամբ կատարուելիք շատ քան կայ գեղեւ: Իր յօդուածներում Մ. Սթոնը բանասիրական սեղեկութիւններ է տրուել Դ Եզրի Հին Հայերէն թարգմանութեան եւ նրա յայտնի 18 ձեռագիրների մասին, վեր հանել նրա բնագրային—իմաստային առանձնայատկութիւնները լատիներէն, ասորերէն, եթովպերէն, արաբերէն եւ վրացերէն յրև կամ մասնակի թարգմանութիւնների համեմատութեամբ: Այսուհանդերձ, իրաւամբ պրէլ է Մ. Սթոնը, այս պարականոն գիրքը համակոյժմանիօրէն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է ունենալ քննական բնագիրը, որ նա պատրաստում է, ինչպէս սեղեկանում ենք 1969 թուականին Հրատարակած մի յօդուածից: Նա իր յօդուածների մէջ կանգ չի առել Դ Եզրի Հայերէն թարգմանութեան թուականի մասին, այլ միայն ենթադրում է, որ Հին թարգմանութիւն է: Գիրքն անցելում տպագրուել է, 1805ին Չոհրապետանի Հրատարակած Աստուածաշնչում, Վենետիկի չորս ձեռագրի հիման վրայ:

Մ. Սթոնի այս Հրատարակութիւնն ուշագրաւ է նրանով, որ Դ Եզրի գրաբար Հին թարգմանութեան 18 ձեռագիրները երկու գլխաւոր ճիւղերի ներկայացուցիչների անփոփոխ եւ լրիւ բնագրերը տպագրուած են հանդիպակաց էջերում: Հրատարակութիւնն առուել ուշագրաւ է նրանով, որ հաշուիչ մեքենան, կարծում ենք առաջին անգամ, կազմել է Հայերէն բնագրի համաբարբառը: Աշխատութիւնը ներկայացնենք ներածութեան մէջ շօշափուած հարցերի հերթականութեամբ:

Առաջաբանում ասուած է, թէ աշխատութեան նպատակն է ստատրել Դ Եզրի ուսումնասիրութեան և նրա համաբարբառով համալրել Հայերէն Աստուածաշնչի Համաբարբառը (Երուսաղէմ, 1895), քանի որ վերջինս չի ընդգրկել Դ Եզրը:

Համաբարբառը տպագրուած է լատինական տառադարձութեամբ, որի համադրական աղիւսակը տրուած է էջ Ժէ—ում. առայժմ այնպէս է պահանջել հաշուիչ մեքենայի տպագրող մասը: Մեքենան Հայերէն տառերով գինելը անտարակոյս երկար ժամանակ եւ մեծ ծախս է պահանջում: Յոյս ունենք, որ մի օր այդ կ'իրագործուի: Չնայած տառադարձութեան, համաբարբառը գիրքնիթեանելի է եւ հասկանալի:

Մ. Սթոնը գտել է, որ Դ Եզրի Հայերէն թարգմանութեան ձեռագիրները բաժանուում են երկու գլխաւոր ճիւղի: Մէկի ներկայացուցիչն է, ըստ

նրա, Երեւանի թիւ 1500 ձեռագիրը (Մատենադարան), գրուած 1272—1288 թուերին. միւս բոլոր ձեռագիրները իբր կազմուած են երկրորդ ճիւղը, որի որպէս ներկայացուցիչ ընտրուած է Երուսաղէմի (Ս. Յակոբեանց վանք) թիւ 1933 ձեռագիրը՝ գրուած 1643ին: Այդ երկու ձեռագրերի բնագրերի ուսումնասիրութիւնը ցոյց է տուել, թէ հնարաւոր չէ երկու ճիւղերից մէկին նախընտրութիւն տալ: Միւս կողմից՝ քննական բնագրի կազմութեան բանասիրական դժուարութիւններն ու բարդութիւնները այնքան շատ են, որ հայագէտն աւելի յարմար է համարել ճիւղերի ներկայացուցիչ երկու ձեռագիրներին բնագրերը տպագրել Հանդիպակաց էջերում, մէկն ընդունել որպէս համաբարբառի հիմք՝ ներառնելով նաեւ միւս ձեռագրի այն բառերը, որոնք պակասում են առաջինում: Այդ դժուարութիւններից են հայերէն Դ եղբի իմաստային տարբերութիւնները միւս թարգմանութիւնների համեմատութեամբ:

Համաբարբառը կազմուած է Երուսաղէմի թ. 1933 ձեռագրից: Դրա պատճառն այն է, որ Երեւանի ձեռագիրն ունի 13րդ դարի ձեռագիրներին յատուկ ուղղագրաւորչացական առանձնայատկութիւններ. ք փոխ. եա ե լ, ձայնաւորից առաջ լ փոխ. աւ, հրշտակ փոխ. հրնշտակ, տր փոխ. տեր, եր փոխ. երուսաղեմ, իս փոխ. իսրայել, բառափերջում ա ե ո փոխ այ ե ոյ, դ փոխ. տ՝ ընդդէմ փոխ. ընտրել, աւ փոխ. օ: Երուսաղէմի 17րդ դարի ձեռագիրն այս բոլորի դիմաց ունի ճիշտ համարուած ուղղագրական նորագոյն ձևեր: Եւ քանի որ Մ. Սթոնը աւամանափակուել է միայն Երեւանի ձեռագրի մասնակի ւրրագրութիւններով բնագրում եւ համաբարբառում, ուստի համաբարբառի համար նախընտրել է Երուսաղէմի նորագոյն ձեռագիրը իբրեւ կայուն ուղղագրութիւն ունեցող: Նրա կարծիքով երկու ձեռագիրներից մէկի կամ միւսի ընտրութիւնը կարեւորութիւն չունի, քանի որ ընդհանրապէս Դ եղբի բոլոր բառերն են ընդգրկուած համաբարբառում:

Համաբարբառում բառերն այբբենական կարգով դասաւորուած են իրենց ձևաբանական եւ գրչագրական այն բոլոր ձևերով, ինչպէս Հանդիպում են բնագրերում: Պէտք է ասել, որ Երուսաղէմի ձեռագիրն էլ գերծ չէ «սխալ» գրչագրուած ձևերից: Թեքուած ձևերը տրուած են զլխաբառերից յետոյ: Անունները եւ գերանունները զլխաբառերն են եզակի ուղղականը. բայերը ներկայացուած են սահմանական ներկայի եզակի առաջին դէմքի տակ, ինչպէս բառարանում: Նախգրիները նշուած են այբբենական կարգով, բայց իրենց խնդրի հետ միասին նաեւ վերջինիս բառայօդուածում: Երկու անգամ են նըշուած նաեւ դարձուածքների մէջ մտած բառերը՝ առանձին եւ դարձուածքում: Յատուկ անունները, ինչպէս նաեւ «և» շարժապը համաբարբառում ներկայացուած են յաւելուածներում: Համանուն բառերը համարակալուած են: Փորձով գտնեք, որ բառածակերից յետոյ նշուած թուում են գլուխների և նրանց առններն. լատիներէն թարգմանութեան համաձայն Մ. Սթոնը հայերէն բնագիրը զլխակարգել է (Գ զլխից սկսած) եւ տնտել: Երեւանի ձեռագրից համաբարբառի մէջ մտած բառերը բնագրի տպագրութեան մէջ կրում են աստղանիշ: Համաբարբառը պատրաստուած է Երուսաղէմի երբայական համալսարանի հաշուողական կենտրոնում: Իւրաքանչիւր զլխաբառից յետոյ տրուած է գործածութեան յաճախականութեան վիճակագրութիւնը, իսկ առաջարանում՝ գործածուած բառերի ընդհանուր գումարը:

Մ. Սթոնի աշխատանքը Հաշուիչ մեքենայով հայերէն մի բնագրի համաբարբառ կազմելու առաջին յաջող փորձն է, որ խոստմնալից է եւ մեծ ծառայութիւններ կը մատուցի հայագիտութեան. ուստի կարծում ենք, որ յար-

զեւի Հայազէտը միանգամայն բարեկամօրէն կ'ընդունի Հետեւեալ խորհրդա-
ծուծիւնները իր աշխատանքի մասին :

1. Յամկալի էր, որ աւաջսբանում հալիքն կերպով ներկայացուէր
Դ Եզրը . մասնաւոր երեւանի ընթերցողի Համար դա աւելի օգտակար կը լի-
նէր, որովհետեւ նա դժուար թէ գտնի եւ կարգայ Հեղինակի յօդուածները,
որոնք վերաբերում են Դ Եզրին եւ նշուած են առաջաբանի տողատակում :

2. Կարծում ենք, որ համարաբար կազմելուց առաջ աւելի ճիշտ կը
լինէր կազմել համահաւաք քննակազմ քննարկը :

Այնպիսի աշխատանքի Համար, ինչպիսին է Համարաբարուը, բնազրի
անթերիութիւնը, բանասիրական եւ լեզուական բարձր որակը շատ կարեւոր
են : Ասացինք, որ Հեղինակը յայտնում է, թէ իր աշխատանքի նպատակներից
մէկն է հեղեւ՝ Համալրել Հայերէն Ատուածաշնչի գոյութիւն ունեցող Համա-
բարբառը (աշխատասիրութիւն Քաղէսս Վարդապետ Ատուածատուրեանի,
Երուսաղէմ, 1895) : Արդ, գիտենք, որ այս Համարաբարուը Ատուածաշնչի
դիտական Հրատարակութիւնից չէ կազմուած եւ չէր էլ կարող կազմուել, քա-
նի որ նոյնիսկ մինչեւ օրս դժբախտաբար չունենք Հայերէն Ատուածաշնչի
դիտական Հրատարակութիւն : Սակայն մեր ժամանակներում, երբ գիտա—քնն-
նական Հրատարակութիւնները անհրաժեշտութիւն են ճշգրիտ բանասիրու-
թեան Համար, որքա՞ն նպատակայարմար էր արդեօք Համարաբարու կազմել
տասնութիւն ձեռագիր ունեցող բնագրի միայն երկու ձեռագրերի ճիշտ եւ սխալ
տուեակների Հիման վրայ : Չէ՞ որ երբ Դ Եզրի քննական բնագիրը կազմուի,
ընթերցողները ընտրութիւնից յետոյ շատ բառեր դուրս կգան կազմուած
Համարաբարուից : Երբ նոյն նախադասութեան մէջ երկու տարբեր բառեր են
գործածուած երկու ձեռագրերում, բնականաբար այդ բառերից միայն մէկը
կ'ընդունուի դիտական բնագրի եւ, Հետեւաբար, Համարաբարուի մէջ : Բերենք
օրինակներ .

Երուսաղէմի ձեռագիր (A) — «Ես քեզ ասացից» (էջ 6, տող 1) .

Երեւանի ձեռագիր (H) — «Ես քեզ պատմեցից» (էջ 7, տող 1) :

Բնական է, որ երկու բայերից մէկը միայն կը մտնի դիտական բնագ-
րի եւ, Հետեւաբար, Համարաբարուի մէջ : Կամ .

Ձեռ. A — «Բարեռք խօսեցար» (էջ 6, տուն 20) .

Ձեռ. H — «Բարիռք դատեցար» (էջ 7, տուն 20) :

Ինչպէս տեսնում ենք, այստեղ նախադասութեան երկու բառերն էլ
տարբեր են եւ բոլորն էլ չեն մտնի բնագրի եւ Համարաբարուի մէջ :

Գիտական բնագրում տեղ չեն գտնի ձեռքանական տեսակէտից սխալ
ուղղագրութեամբ ձեւեր, ինչպիսին են, օրինակ, սեխս փոխ. սեխայ, ամբա-
բըշտաց փոխ. ամբարշտաց եւ, Հետեւաբար, սրանք եւս դուրս կգան այսօր-
ուայ Համարաբարուից, ուր տեղ են գտել ճիշտ ուղղագրութեամբ ձեւերի
կողքին :

Այսպիսով, եթէ կազմուած Համարաբարուից բառեր պէտք է դուրս
գան եւ նորեր մտնեն, ապա կազմուած Համարաբարուը պէտք է վերակառուց-
ուի : Ուստի մեր կարծիքով աւելի նպատակայարմար էր նախ գիտական բնա-
գիրը կազմել եւ յետոյ Համարաբարուը, որ բնագրի արտացոլումն է : Ձենք
կարծում, որ կազմուած Համարաբարուը նպաստի քննական բնագրի կազմու-
թեան, որ խոստանում է Հեղինակը իր յօդուածներից մէկում :

3. Նախընտրելի էր, մեր կարծիքով, համարաբարուը կազմել Երեւանի
ձեռագրից :

Ինչպէս ասացինք, Համարաբարուը կազմուած է Երուսաղէմի ձեռագրի

Հիման վրայ, և ընտրութեան պատճառն այն է, որ Երեւանի ձեռագիրն ունի հնագոյն ուղղագրութիւն. զերեւում նշուած ուղղագրական ձեւերին աւելացրեանք, որ բառամիջում ա և ւ ձայնաւորներէջ յետոյ պահպանուած է յ կրտսմայնը: Ստեփան Երուսաղէմի ձեռագիրն էլ ունի ուղղագրական սխալ ձեւեր, որոնք մտել են համարաբարութիւնը՝ որինսկի՝ սկստ (էջ 2, տուն 31), շրջեցտ (էջ 4, տուն 33), ամբարըշտաց (էջ 8, տուն 23) մտելսի (էջ 2, տուն 17) և այլն:

Ստեփան համարաբարութիւն համար ընտրուած սրեւէ ձեռագրի առաւելութիւնը կամ որակը միայն ճիշտ ուղղագրութեամբ չի որոշուած: Շատ աւելի կարեւոր է ընթերցումներէ հարազատութիւնը և սկզբնական լինելը: "Manuscripts and Readings of Armenian IV Ezra" յօդուածում (էջ 47-57), Մ. Սթոնը ցոյց է տուել Երեւանի ձեռագրի ընթերցումներէ հարազատութիւնը միւս ձեռագիրներէ համեմատութեամբ: Ի միջի այլոց ասեմք, որ իր յօդուածներում Մ. Սթոնը նայեցիսի մանրամասնութեամբ չի խօսել իր ընտրած Երուսաղէմի ձեռագրի մասին, ոչ էլ յիշատակել նրա բնագրային արժանիքները, բայց նրա ուղղագրութեան կայուն լինելուց: Նշուած յօդուածում Երուսաղէմի ձեռագրին տուել է 1934 թուահամարը, իսկ այն հարադարակութեան մէջ՝ 1933: Դարձեալ զերբ նշուած յօդուածի էջ 57ում, իր կարեւորագոյնութիւններէ մէջ նա գրել է, թէ միւս ձեռագիրներէ համեմատութեամբ Երեւանի ձեռագիրը պահել է աւելի հարազատ և աւելի ընտիր ընթերցումներ. ստեփան, աւելացրել է նա, միշտ չէ, որ բնագրային ընթերցումներէ տեսակէտից այս ձեռագիրը միւսներէջ աւելի լաւ է. երկու խումբ ձեռագրերի մէջ էլ կարելի է գտնել սկզբնական և հարազատ ընթերցումներ: Համաձայն ենք այս զերջին մտքին. մի ձեռագրից չի կարելի սպասել, որ բոլոր զէջերում և ամէն տեսակէտից միշտ անթերի լինի միւս ձեռագիրներէ համեմատութեամբ: Ճիշտ է, որ Երուսաղէմի ձեռագիրը երբեմն պահել է լաւագոյն ընթերցումը: Բացառուած չէ նաև, որ երկու ճիւղերէ երկրորդական ձեռագրերէջ մէկը պահած լինի նաև ճիշտ ընթերցումներ, որոնք աղտաղտուած լինեն միւսներում: Բազմաձեռագրայնութիւնը առաւելութիւն է: Կարծում ենք, որ Մ. Սթոնը միշտ է դեմահասել Երեւանի ձեռագիրը, և աւելի լաւ էր այն զերջինի որդէն համարաբարութիւնը, որքան էլ տխուրուած լինէր նրա ուղղագրութիւնը. նկատելի է, որ նա էլ ունի իր կայուն ուղղագրութիւնը, որքան էլ զերջինս այսօր տխուր համարուի: Առաջին իսկ ասիւրից երեւում է Երեւանի ձեռագրի առաւելութիւնը.

Երուսաղէմի ձեռագիր

Երեւանի ձեռագիր

- 1. Ես Սողոմոնի էլ որ և կար կուշեցայ
- 2. և ի բարեկուն յամին երեսներորդի
- 3. ...ապշեալ լինէի ի հագի իմ.
- և սկստ աւել ցրարձրեան զրանս
- 4. ահագինս. և տապցի.
- ասեմ,
- աէր աստուած իմ...

- Ես սողոմոնի էլ որ և կար կուշեցա
- և ի բարեկունի յամին երեսներորդի
- զերութեանն հրեսասանի
- ապշեալ լինէի յագի իմ:
- Յես այնորիկ
- սկստ աւել ցրարձրեան բանս
- ահագինս. և տապցի
- աէր աստուած իմ...

Կարծում ենք, որ թէկուզ միայն այս մի բանի տարբերութեամբ Երեւանի ձեռագրի ընտիրն աւելի ընտիր է, քան Երուսաղէմիւնը. աւելորդ է մանրամասն ցոյց տալ այլ:

Երևանի ձեռագիրն ունի նաև քրականական ճիշտ ձևեր միւս ձեռագրի իսկապէս սխալ ձևերի դիմաց . օրինակ .

Երուսաղէմի ձեռագիր

Երեւանի ձեռագիր

կանց գալնիւ (էջ 2, տուն 7)

անց գալնու

խոստացար ծառային քո (2 . 18)

խոստացար ծառային քում

որում պատուէր ետուր զի ծանիցեմ (2 . 7)

որում պատուէր ետուր զի ծանիցեմ (խօսքը կկամի մասին է , ուստի ճիշտ է ծանիցե եղակին) :

անտառոց (7 . 21)

անտառաց (ըստ «Հայկազեան» եւ «Առձեռն» բառարանների , այս դոյականը եղակիւմ ընդունում է Ի , յոյն . Ա . կամ Ի Հոյսովիչը , բայց ոչ Ո) :

Երուսաղէմի ձեռագրի այս եւ նման բաղմամբիւ սխալ ձևեր մտել են Համարաբառի մէջ , որոնցից սխալ եղբակացութեան կարող է հանդիպի անխորձ ուսումնասիրողը :

Երուսաղէմի ձեռագիրն ունի նաև անիմաստ ընթերցումներ , որոնք առաջացել են ընդգրկի աղաւաղումից , ինչպէս Հեռեւեալ նախադասութեան մէջ . «՞ որ ազգ պահեաց զպատուիրանս քո . թերեւս ուրեք նուազարանս գտանիցես ազգ . ոչ ուրեք» . սրա դիմաց Երեւանի ձեռագիրն ունի «՞ որ ազգ պահեաց զպատուիրանս քո : թերեւս նուազ արժ գտանիցես : ազգ եւ ոչ ուրեք» : Գրաբարի բառարանները չունեն «նուազարան» բառը , որ այսուեղ անիմաստ է :

Երուսաղէմի ձեռագիրը բնագրի տեսակէտից ունի նաև շատ ուրիշ թերութիւններ , որոնք նկատի առնելով՝ նախընտրելի էր Համարաբառը կարգմել Երեւանի ձեռագրից : Առաջարանում ասուած է , թէ ձեռագրի ընտրութիւնը նշանակութիւն չունի . քանի որ միայն Երեւանի ձեռագրում հանդիպող բառերն էլ են մտել Համարաբառի մէջ : Կարծուած ենք , որ սա դեռեւս բաւարար արդարացում ե միութեամբիւն չէ , որպէսզի լաւագոյն ձեռագիրը չընդունուի իբրեւ Համարաբառի Հիմք :

4 . Բնագրերի ընտրութեան եւ տպագրութեան վերաբերեալ մեր ընդհանուր կարծիքն այն է դարձեալ , որ Համարաբառը կարգելուց առաջ անհրաժեշտ էր կարգմել քննական ընդգրկը , բնագրերը բեռնաթափել դրչարկակոն եւ լիմաստային սխալներից : Ձեռագրերից նոյնութեամբ տպագրուած՝ նրանք միայն մոտաւոր դաշուփար են տալիս զբքի բովանդակութեան մասին : Միայն զբանց զրաչ հիմնուելով՝ շի էլ կարելի քննական ընդգրկ կարգել . անհրաժեշտ կը լինի աչքի առաջ ունենալ բոլոր ձեռագիրները :

Նշագրերի տպագրութեան մէջ մտնից առաջ աչքի է զարկում ոչ միայն միջնադարեան ուղղագրութիւնը , այլևս դրանց ասորթինակ եւ անօգուտ կէտադրութիւնը : Նկատելի է , որ դրանցում չկայ ստորակէտ : Միծայոյն պատահականութեամբ այս ու այն տեղ դրուած են վերջակէտ , միջակէտ կամ բութ , յաճախ իրարից բաժանելով բառակապակցութեան անգամները : Ընթերցողին է մնում այդ մացանների միջից ուղի բացել եւ վերահասու լինել ընդգրկի իմաստին :

Բնագրերը բաժանուած են գլուխների եւ տունների ըստ լատիներէն թարգմանութեան : Լաւ կը լինէր , որ գլխակարգումը նշանակուէր հայերէն այբուբենի գլխադրանքով եւ ոչ թէ հոսմէական : Առաջարանում ասուած չէ , թէ ինչո՞ւ ընդգրկը սկսում են Գ դիմից , ինչո՞ւ ընդգրկումը բացակայում են

որոշ տուներ. օրինակ՝ էջ 8—9 տուն 41, էջ 10—11 տուն 46, էջ 42 տուն 131 և 133, էջ 43 տուն 131 և այլն. չէ ասուած, թէ ինչո՞ւ էջ 42ում է դրուած 118րդ տունը, որ իր տեղում բացակայում է: Արդե՞ք դարձեալ լատիներէն թարգմանութեան համաձայն:

5. Մենք տարբեր կարծիք ունենք նաեւ համարաբառի վերաբերեալ:

Իրբեւ սկզբունք, համարաբառի մէջ չեն անուած միւլետոն բայի տարբեր ժամանակաձեւերը կամ նոյն անուան ձեւաբանական այլ ձեւեր, որոնք հանդիպում են միայն Երեւանի ձեռագրում. այսպէս օրինակ, համարաբառի մէջ մտել է Երուսաղէմի ձեռագրի «մատնեցաւ» բայածեւը, իսկ Երեւանի ձեռագրում դրան համապատասխանող «մատնեցեր» բայածեւը՝ ոչ: Աւելին. Երուսաղէմի ձեռագրի «զայնիւ» սխալ հոլովածեւը մտել է համարաբառի մէջ, իսկ Երեւանի ձեռագրի «զայնու» ճիշտ ձեւը՝ ոչ: Կարելի է այսպիսի ստաննակ օրինակներ բերել: Արդ, եթէ համարաբառը կոչուած է արտացոյցու որեւէ բայի կամ անուան բոլոր ուղիղ եւ թե՛ք ձեւերը, ապա ինչի՞՞ հիման վրայ կարելի է համարաբառի մէջ ընդգրկել Երուսաղէմի ձեռագրի բոլոր, այդ թուում և սխալ ձեւեր եւ անտեսել Երեւանի ձեռագրի աւելի ճիշտ և յաւ ձեւերը: Ի միջի այլոց նշենք, որ նոյն բառի թեքուած ձեւերից միայն մէկը համարաբառում նշելու սկզբունքից չեղումներ են նկատուում. օրինակ, Երուսաղէմի ձեռագրի «ծննդոց» ձեւի հետ համարաբառում նշուած է նաեւ Երեւանի ձեռագրի «ծննդից» համապատասխան ձեւը, երկուքն էլ «ծնունդ» գլխաբառի տակ:

Կարծում ենք, որ աւելի լուրջ է հետեւեալ բացթողումը: Գրաբարում ունենք կրկնակի ուղղագրութեամբ բառեր, որոնք նշուած են գրաբարի բառարաններում: Համարաբառում անտեսուած են նաեւ Երեւանի ձեռագրի այդպիսի բառեր. ինչպիսին են հետեւեալները եւ ուրիշներ. արշնայ (ղլ. Գ, 3), կրուկն (ղլ. Դ, 5. Երուսաղէմի ձեռ. «կրունկ»), շաւեզ (ղլ. Դ, 7. միւսը՝ «շաւիզ»), քարիւզ (ղլ. Դ, 20. միւսը՝ «քարուք»), չորրորդեան (ղլ. ԺԴ, 48. միւսը՝ «չորրորդ») և այլն:

Հաւանաբար անուշադրութեան հետեւանք է, որ ընազրում աստղանիշ չեն կրում եւ համարաբառի մէջ չեն մտել Երեւանի ձեռագրի որոշ բառեր. օրինակ, ալկն (ղլ. Գ, 29), գ (ղլ. Դ, 9), եւ (ղլ. Դ, 24, երկու «եւ»), հաւատացեալ (ղլ. Դ, 43, միւս ձեռագիրն ունի «հատուցանելոցն») եւ այլն: Բոլոր թեքումների ղէպում պէտք է որոշել, թէ հարուիշ մեքենան վառ չի՞ աշխատել արդեօք:

Գլխաբառի տարբեր ձեւերը դասաւորուած են այբբենական կարգով: Կարծում ենք, որ հետեւեալ դիտումնաւոր խախտումները գծուարացնում են համարաբառի օբյեկտիւթիւթը. ԵՍ—իմ—յիմէն—իմն—իւ—գիւ—յիւ—գիւ. ԵՄԻԿ—երեսաց—գերեսա—յերեսա—երեսի. կամ բայի դրական ձեւին անմիջապէս յաջորդում նրա ժխտականը՝ խախտելով այբբենական դասակարգումը՝ Է—չէ—էաք—չէաք . . . Էր—չէր. կամ ի՞նչ սկզբունքով «Աձեւը» բայով սկսուող դարձուածքները՝ «ածաք գմտաւ . . . ած դմտաւ» ՄԻՏ գլխաբառի տակ դրուած են, «Դնել» բայով սկսող «գիր ի մտի . . . եղ ի մտի» դարձուածքներից յետոյ: Կարծում ենք, որ այսպիսի եւ նման ղէպներում նոպատակաբար էր պահպանել խիստ այբբենական կարգը, մանաւանդ երբ նոյն գլխաբառի տարբեր ձեւերը անցնում են մի էջից միւսը շարունակաբար, եւ մոտանում եւ կամ դժուարանում կաշակել, թէ դրանք ո՞ր բառին են վերաբերում:

Գլխաբառերի այբբենական կարգը խախտուած է էջ 166ում, ուր ԵՄԿՈՒ գլխաբառից անմիջապէս առաջ (ԵՄԿՈՏԱՍԱՆԵՔԻՆ գլխաբառից յետոյ)

գրուած է ե՛ն ղլխարաւը և յղում արուած այս բառի յատուկ համարարաւ—
յաւելուածին: Այս բաւը պէտք է գրուէր յաջորդ էջ 167ի սկիզբը ԵՒԹՆ ղլխա-
րառից անմիջապէս առաջ:

«Աժ գմտաւ» դարձուածքի դիմաց նշուած առաջին տեղում Երուսա-
ղէմի ձեռագրում կարգում ենք «ած մտաւ»՝ առանց զ նախդրի:

Միայն Երեւանի ձեռագրում գործածուած «մաւտ» բառը համարա-
բառում գրուած է ՄՕՏ ղլխարառի տակ. կարծում ենք, որ համարարառում
պէտք է պահել ձեռագրի ուղղագրութիւնը, քանի որ Երուսաղէմի ձեռագրում
երբէք գործածուած չէ այս բառը:

Համարարառում ղլխարառի տարբեր ձեւերից յետոյ գրուած են թը-
ւեր. սակայն առաջարանում ասուած չէ, թէ դրանք ի՛նչ են ցոյց տալիս. փոր-
ձով միայն կարողացանք կուահել, որ դրանք ցոյց են տալիս բնագրերի ղլուխ-
ներն ու տուները: Կուահուը դժուարանում է մանաւանդ նրանով, որ բնագրե-
րում գլուխները նշանակուած են հոռմէական ղլխագիրներով, իսկ համարա-
բառում՝ արարական թուանշաններով:

Երեւանի ձեռագրին յատուկ բառաձեւերը համարարառում Ի տար-
բերակիչ տառով դասաւորուած են Երուսաղէմի ձեռագրի ձեւերից յետոյ.
Թէև այս մասին յայտարարուած է առաջարանում, սակայն կարծում ենք, որ
համարարառի գործածութեան տեղակէտից աւելի նպատակայարմար էր այդ
տարբերութիւնը չղնել երկու ձեռագրերի միջև, քանի որ տարբերակիչ դիրն
արդէն բաւական էր. այլ կերպ՝ նոյն բառաձեւը երկու համարարառի մէջ
ենք որոնած լինում: Երբեմն էլ խախտուած է թէ՛ այս և թէ՛ բառաձեւի դոր-
ծածութեան տեղերն ըստ գլուխների հերթականութեան նշելու սկզբունքը.
օրինակ, ՄԻՆԶԵՒ բառայօդուածում «Յ:23»ը գրուած է նոյն ձեռագրի յաջորդ
ղուխներից և Երեւանի ձեռագրի տեղից յետոյ:

Բնագրերի տպագրութեան մէջ նկատելի են միջապակներ. օրինակ՝ էջ
82, տուն 48, «վարաթուն ամաց» փոխ. «չարաթուն», «յորջորջեցայ» փոխ.
«յորջորջեցայ». այս ձեւերը համարարառում ճիշտ են տպագրուած:

Այս մանր-մունր թերութիւնները նշելով մենք պարզապէս ուզում ենք
Մ. Սթանի և նրա օգնականի ուշադրութիւնը հրաւիրել հաշուիչ մեքենայի
աշխատանքի վրայ, որպէսզի յետագայ աշխատանքներն աւելի լաւ և անթերի
կատարուեն, որովհետև համոզուած ենք, որ այս համարարառին կը յաջոր-
դեն ուրիշներ՝ դարձեալ հաշուիչ մեքենայի օգնութեամբ կատարուած:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Երուսաղէմ